

յիշատակաց Լեւոնի, որպէս զյոգունց նախնեաց իւրոց եւ օտարագնեայց. այլ այս մի՝ անմաշ եւ անմահ մնայ՝ իմիջի գործոց անմահացելոց՝ ըստ երկրաւոր քաղաքավարութեան. գերազանցեալ արդեօք զհանութք համավիճակօքն՝՝ խոռհմայինս մերում պատմութեան, եւ ընդ գերագոյն անձինս դասակցեալ՝ ի համաշխարհականին:– Եւ զի իբրո՛ւ՝ ի նշախարաց եւ՝ ի իշրանաց դպրութեանց եւ դիւանաց՝ քաղեցան որ զԼեւոնէ մերս այս Դրուագք բանից, փափագելի եւ յուսալի եւս է՝՝ ի յայտնել նորոց յիշատակարանաց, հրաշափառագոյն եւս երեւել եւ հանդիսանալ նմա. զոր՝ եւ ապագայից մերոց մաղթեմք հռչակել,՝ ի պարծանս եւ յաւէտ յօգուտ Հայկազնեայցս գրոհի,՝ ի ցոյց այլոց ազգաց, եւ յօրհնութիւն Ամենակալին. որոյ միայն է կամել եւ կազմել այսպիսի այր հանճարեղ՝ Յաղթող եւ Մեծ, նա՛ մանաւանդ Մեծագործ, որպէս արժան եւ իրաւացի վարկանիւմ կոչել եւ կնքել զմերս Լեւոն Առաջին թագաւոր Սիսուանայ: